

ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է նորածնային վերակենդանացման արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել նորածնային վերակենդանացման ելքերը:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետի ղեկավարած աշխատանքային խմբի կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Ամերիկյան սրտաբանների ասոցիացիայի և Ամերիկյան Մանկաբույժների ասոցիացիայի կողմից 2015թ. հեղինակած «Նորածնային վերակենդանացում» ուղեցույցը, ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) [266]: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Նեոնատալ Բժշկության Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Ուղեցույցը նախատեսված է նեոնատոլոգների, մանկական ռեանիմատոլոգների, մանկաբույժների, մանկաբարձ գինեկոլոգների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա Ուղեցույցում լուսաբանվել են նորածնային վերակենդանացման ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները:

Հեղևություններ

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության նորածնային վերակենդանացման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ որոշ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ դա բարձր մահացության և նյարդաբանական շեղումների զարգացման ռիսկով պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցեր, նորածին, վերակենդանացում, մեկոնիալ ասպիրացիա, անհաս նորածին

Պատասխանատու համակարգող

Մազմանյան Պ.Ա., բ.գ.դ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի նեոնատոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ գլխավոր նեոնատոլոգ, ՄՄԱՊԳՀԿ նորածնային վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքների ղեկավար:

Աշխատանքային խմբի անդամներ

- Կալենտերյան Հ.Զ., ՀՀ ԱՆ գլխավոր մանկական ռեանիմատոլոգ անեսթեզիոլոգ, Նեոնատալ Բժշկության Հայկական ասոցիացիայի նախագահ, Մուրացան համալսարանական կլինիկա, մանկական և նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար
- Դարակչյան Մ.Ա., Գրիգոր Նարեկացի ԲԿ նորածնային բաժնի վարիչ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է, որ 2016 թ. չի ստացել որևէ ֆինանսական աջակցություն: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես ծնարանում, այնպես էլ նորածնային ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (ՆԻԹԲ) գտնվող նորածինների համար:

Բովանդակություն

Հապավումներ

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

1. Վերակենդանացման նախնական քայլեր
2. Վերակենդանացման անհրաժեշտության կանխատեսում
3. Պորտալարի սեղմում
4. Նորածնային վերակենդանացման առաջակի քայլեր
 - 4.1. Ծնարանում նորմալ ջերմաստիճանի պահպանման կարևորությունը
 - 4.2. Շնչուղիների մաքրում պարզ ամնիոտիկ հեղուկի առկայության դեպքում
 - 4.3. Շնչուղիների մաքրում մեկոնիալ ամնիոտիկ հեղուկի առկայության դեպքում
 - 4.4. Սրտի զարկերի հաճախության գնահատում
 - 4.5. Թթվածնի կարիքի գնահատում և օքսիգենոթերապիա
 - 4.5.1. Պուլսօքսիմետրիայի օգտագործում
 - 4.5.2. Թթվածնի օգտագործումը հասուն նորածնի մոտ
 - 4.5.3. Թթվածնի օգտագործումը անհաս նորածնի մոտ
5. Դրական ճնշմամբ օդափոխություն
 - 5.1. Առաջին շնչառական ակտեր
 - 5.2. Արհեստական շնչառություն
 - 5.3. Արհեստական շնչառության սարքեր և կառավարելի շնչուղիներ
 - 5.3.1. Ինքնափչվող վերակենդանացման պարկ
 - 5.3.2. T-աձև վերակենդանացման սարք
 - 5.3.3. Դիմակով կատարվող ԱՇ
 - 5.3.4. Լարինգեալ դիմակ
6. Ներշնչափողային ինտուբացիա
7. Շնչուղիներում շարունակական դրական ճնշման կիրառություն (CPAP)
8. Սրտի անուղղակի մերսում

9. Դեղորայք

10. Հետվերակենդանացման խնամք

11.1. Արյան գլյուկոզայի կարգավորում

11.2. Բուժական հիպոթերմիայի իրականացում

12. Վերակենդանացման չիրականացում և դադարեցում

13. Մոնիտորինգ

14. Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Վերակենդանացման ավգորիթ

Հավելված

Գրականության ցանկ

Հապավումներ

ԱՇ - արհեստական շնչառություն

գ - գրամ

ԷՍԳ - էլեկտրասրտագրություն

ՆԷԿ - նեկրոտիզացնող էնտերոկոլիտ

ՆՓԱ - ներփորոքային արյունազեղում

ՊՆԱԴ - պտղի ներարգանդային աճի դանդաղում

ՍԶՀ - սրտի զարկերի հաճախականություն

սմ ջ. ս. - սանտիմետր ջրի սյան

վրկ - վայրկյան

AHA - Ամերիկայի սրտաբանական ասոցիացիա

AAP - Ամերիկայի մանկաբույժների ակադեմիա

CPAP - շարունակական դրական ճնշում շնչուղիներում

ILCOR - Վերակենդանացման փոխգործակցության միջազգային խորհուրդ

PEEP - դրական ճնշում արտաշնչման վերջում

PIP - ներշնչման առավելագույն ճնշում

SpO2 - արյան թթվածնային հագեցվածություն

Նախաբան

Հասուն նորածինների ինքնուրույն և կանոնավոր շնչառության հաստատման, ինչպես նաև պտղայինից նորածնային արյան շրջանառության անցման համար երբեմն աննշան օգնության կարիք է լինում: Նորածինների մոտավորապես 85%-ը ներարգանդայինից արտարգանդային կյանքի անցնում են առանց որևէ խնդրի, 10%-ի մոտ ինքնուրույն շնչառություն առաջանում է տակտիլ խթանման և չորացման ընթացքում, 3%-ը պահանջում է արհեստական շնչառություն (ԱՇ), միայն 2%-ի մոտ կատարվում է շնչափողի ինտուբացիա, և ընդամենը 0,1%-ն է պահանջում սրտի անուղղակի մերսում և/կամ դեղորայքային միջամտություն [1-6]: Պտղի ծանր անտե- և ինտրանատալ հիպօքսիան բարձր պերինատալ հիվանդացության և մահացության հիմնական պատճառներից է:

Տարբեր տվյալներով, վերակենդանացման կարիք ունեն հասուն նորածինների 0,5-2%-ը, անհաս և գերհաս նորածինների 10-20%-ը: Ընդ որում, 1000-1500 գ. մարմնի զանգված ունեցող անհասների 25-50%-ի մոտ է անհրաժեշտ լինում կատարել վերակենդանացում, իսկ 1000 գ-ից ցածր մարմնի զանգված ունեցողների՝ 50-80%: Թեև միջամտության կարիք ունեցող նորածինների մասնաբաժինն այդքան էլ մեծ չէ, նման օգնության ցուցաբերումն ուղղակիորեն անդրադառնում է թե՛ երեխայի կենսունակության, թե՛ կյանքի տևողության և որակի վրա: Նորածնի արդյունավետ վերակենդանացումը թույլ է տալիս զգալի կերպով նվազեցնել պերինատալ հիպօքսիայի անբարենպաստ ելքերը և մոտ 40%-ով նվազեցնել նորածնային մահացությունը և հիվանդացությունը:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետի ղեկավարած աշխատանքային խմբի կողմից: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներ են հանդիսացել 2015թ. ILCORI-ի կողմից ներկայացրած հիմնական ուղեցույցները, որտեղ լուսաբանվում են 2015թ. Ամերիկայի մանկաբույժների ակադեմիայի (AAP) և Ամերիկայի Սրտաբանական ասոցիացիայի (AHA) կողմից վերանայված նորածնային վերակենդանացման հիմնական հարցերը և փոփոխությունները: Բուժական ուղեցույցների նորածնային հատվածը հրատարակվել է *Circulation* (2015, 132: S543-S560), *Pediatrics* (Nov 2015, 136 [Supplement 2] S120-S166) ամսագրերում: Բացի հիմնական դրույթներից այստեղ մեկնաբանված են առավել վիճահարույց սկզբունքները, որոնք կարող են հանգեցնել վերակենդանացման ընդունված գործելաոճի որոշակի փոփոխությունների: Օգտագործվել են նաև *Cochrane*

library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Գրականական աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Տեղայնացման/ադատապառհայի աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող 2015թ. ուղեցույցում համաձայն Վերակենդանացման միջազգային միասնական կոմիտեի ցուցումների (International Liaison Committee on Resuscitation, ILCOR) հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) և AHA-ի խորհուրդների դասերի (Classes of Recommendation, COR) և ապացույցների մակարդակների (Level of Evidence, LOE) դասակարգումները (տես՝ Հավելված 1): ILCOR-ի տեղեկատվության որոնման մարտավարությունը ընդգրկել է հետևյալ քայլերը՝ համակարգային որոնման հարցերի կազմում (PICO), որոնման կանոնների սահմանում, յուրաքանչյուր PICO հարցին վերաբերվող հոդվածների համար երկու անկախ վերլուծաբանի ընտրություն, ապացույցների գնահատում ըստ GRADE-ի և խորհուրդների ձևակերպում: Համաձայն ILCOR-ի աշխատանքային խմբի մեթոդաբանությանը GRADE համակարգի ներքո հնարվոր են խորհուրդների չորս խմբեր՝ ուժեղ խորհուրդ օրինակ կամ բուժական միջամտության օգտին, ուժեղ խորհուրդ օրինակ կամ բուժական միջամտության կիրառման դեմ, թույլ խորհուրդ օրինակ կամ բուժական միջամտության օգտին և թույլ խորհուրդ օրինակ կամ բուժական միջամտության կիրառման դեմ: Ուժեղ խորհուրդը ձևակերպվում է «**մենք խորհուրդ ենք տալիս**» արտահայտությամբ մինչդեռ թույլ խորհուրդը՝ «**մենք առաջարկում ենք**»: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

1. Վերակենդանացման նախնական քայլեր

Վերակենդանացման միջամտությունների ծավալը և քայլերի հաջորդականությունը ծնարանում կախված են երեխայի վիճակից և անցկացվող միջամտությունների արդյունավետությունից: Այդ պատճառով յուրաքանչյուր 30 վրկ մեկ անհրաժեշտ է կատարել երեխայի վիճակի գնահատում, առաջնորդվելով 3 ցուցանիշներով.

- ՍԶՀ
- Սպոնտան շնչառության առկայություն
- Մաշկային ծածկոյթների գույն

Ֆիքսել ծնվելու ժամը, ապա պատասխանել երեք հարցի.

- Երեխան հասո՞ւն է
- Ունի՞ բավարար մկանային տոնուս
- Երեխան ճշո՞ւմ է կամ շնչում

Եթե այս բոլոր 3 հարցերի պատասխանները «այո» են, ապա երեխան մնում է մոր հետ և իրականացվում է սովորական խնամք (երեխայի չորացում, մաշկը մաշկին շփում, հետագա հսկողություն և գնահատում): Ըստ նոր ուղեցույցի՝ այն հասուն և անհաս նորածիններին, որոնց համար չեն կատարվել վերակենդանացման միջոցառումներ, ցուցված է պորտալարի ուշ (30 վրկ-ից հետո) հատում (դաս II ա, LOE C): Ըստ 2015 թ. ILCOR-ի կողմից տրվող հանձնարարականների, պորտալարի ուշ սեղմումը բարձրացնում է զարկերակային արյան ճնշումը և շրջանառող արյան ծավալը, նվազեցնում է արյան փոխներարկումների, ՆՓԱ-ի և ՆԷԿ-ի հավանականությունը: Միակ ոչ ցանկալի հետևանք կարելի է համարել համեմատաբար ավելի բարձր հիպերբիլիռուբինեմիան:

Եթե պատասխաններից որևէ մեկը «ոչ» է, ապա անհրաժեշտ է երեխային տեղափոխել ճառագայթային տաքացուցիչի տակ և շարունակել վերակենդանացման նախնական քայլերը:

2. Վերակենդանացման անհրաժեշտության կանխատեսում

Նորածնային վերակենդանացման անհրաժեշտության կանխատեսման հարցում կարևոր է պերինատալ ռիսկի գնահատումը, որը հանդիսանում է հիմնական ցուցանիշ և որից կախված պետք է գնահատվի առկա մարդկային ռեսուրսները, անհրաժեշտ պարագաների և հմտությունների հասանելիությունը՝ ապահովելով արդյունավետ թիմային աշխատանք և բարձր արդյունավետություն:

Յուրաքանչյուր ծննդի ժամանակ ծնարանում պետք է լինի առնվազն 1 մասնագետ, որը ունակ է իրականացնել նորածնի վերակենդանացման առաջնակի քայլեր և դրական ճնշմամբ օգտփոխություն: Վերջինիս գործառույթները պետք է սահմանափակվեն միայն նորածնի խնամքի հարցերով: Եթե առկա է նշանակալի պերինատալ և վերակենդանացման անհրաժեշտության բարձր ռիսկ, ապա ծննդաբերության ժամանակ պետք է ներկա լինի նաև հավելյալ անձ, որը կարող է իրականացնել սրտի անուղղակի մերսում, ներշնչափողային ինտուբացիա և պորտային երակի կաթեթերիզացիա: Եվ քանի որ ցանկացած ցածր ռիսկային ծննդաբերություն ևս կարող է ավարտվել նորածնի ծննդով, որը կարիք ունի վերակենդանացման միջոցառումների, ապա յուրաքանչյուր հիվանդանոցում պետք է առկա լինի հնարավորինս արագ թիմ հավաքելու հնարավորություն [4,5]: Նորածնի վերակենդանացման արդյունավետությունը կախված է նաև անհրաժեշտ պարագաների առկայությունից, որի ստուգման համար պետք է ունենալ ստուգիչ ցուցակ: Անհաս նորածնի ծննդաբերության ժամանակ անհրաժեշտ է նաև հավելյալ մտածել ջերմակարգավորման և շնչառական օժանդակության ապահովման հարցերի մասին նորածինների այս տեսանկյունից խոցելի խմբի մոտ: Երբ պերինատալ ռիսկը գնահատված է և թիմը հավաքված պետք է ընտրել թիմի պատասխանատուին, որի գործառույթները ներառում են կարևորագույն հարցերի և մոտեցումների նախավերակենդանացման քննարկում, հնարավոր միջամտությունների առաձնացում և դերաբաշխում: Վերակենդանացման ընթացքում թիմի անդամների միջև համագործակցության առկայությունը և հմտություններից կախված ճիշտ դերաբաշխումը օգնում է բարձրացնել վերակենդանացման արդյունավետության և հիվանդի անվտանգությունը:

3. Պորտալարի սեղմում

Մինչև վերջին տարիները պորտալարի վաղ սեղմումը ծննդաբերությունից անմիջապես հետո հանդիսանում էր լավագույն գործելակերպը, որը ապահովում էր նորածնի արագ տեղափոխում հետագա կայունացման և վերակենդանացման միջոցառումների իրականացման համար: Այս գործելակերպը մասնավորապես կարևորվում էր անհաս նորածինների համար: 2010թ. ներկայացված ապացույցների հիման վրա առաջարկվում էր հետաձգել պորտալարի սեղմումը այն նորածինների մոտ, որոնք ծնվելուց անմիջապես հետո կարիք չեն ունենցել վերակենդանացման միջոցառումների [6]: 2015թ. ILCOR համակարգային վերլուծությունը ցույց է տվել, որ պորտալարի ուշ սեղմումը նպաստում է ներփորոքային արյունազեղումների քանակի իջեցման, զարկերակային առավել բարձր

ճնշման և շրջանառող արյան ծավալի առկայության, իջեցնում է արյան փոխներարկման անհրաժեշտության և ՆԷԿ զարգացման հավանականությունը: Վերջինս չի բերում ծանր ներփորոքային արյունազեղումների հաճախականության կամ մահացության հավանականության իջեցման (1): Միակ բացասական արդյունքը, որը դիտվել է պորտալարի ուշ սեղմման արդյունքում դա բիլիռուբինի մակարդակի մեղմ արտահայտված բարձրացումն է, որը իր հերթին բերել է ֆոտոթերապիայի օգտագործման ռիսկի ավելացման: Վերոնշյալ հետազոտությունների հիմնական սահմանափակումը արտահայտվում է նրանում, որ վերակենդանացման կարիք ունեցող նորածինները դուրս են մնացել ռանդոմիզացված հետազոտություններից կամ ընտրողաբար չեն ներառվել այնտեղ: Հետևաբար վերակենդանացման կարիք ունեցող նորածինների պարագայում պորտալարի ուշ սեղմման անվտանգությունը և կիրառելիությունը սահմանված չէ, և բացի այդ, առկա է անհանգստություն, որ օդափոխության սկսման ուշացումը կարող է վնասել նորածնին: Որոշ հետազոտություններում ուսումնասիրվել է պորտալարի կթման տեխնիկայի ներդրումը, որը կարող է ապահովել վերոնշյալ արդյունքները, սակայն պահանջում է իրականացման համար առավել կարճ ժամանակահատված, սակայն այս տեխնիկան ևս չունի ապացուցված անվտանգություն և արդյունավետություն, որի պատճառով չի կարող առաջարկվել, որպես ռուտին կիրառման տարր նորածնի և մասնավորապես անհաս նորածնի մոտ [8,9,10-12]: Այսպիսով՝

- **Հիմնվելով առկա ապացուցողականության վրա, որը գոյացել է 2010թ CoSTR (6) և 2015թ ILCOR (1) կողմից իրականացված համակարգային վերլուծության արդյունքում պորտալարի ուշ սեղմումը և պորտալարի կթումը կարող է իրականացվել հասուն և անհաս նորածինների մոտ, որոնք ծննդաբերությունից անմիջապես հետո կարիք չունեն վերակենդանացման միջոցառումների (դաս IIա, LOE C-LD)**
- **Ներկայումս առկա չէ բավարար ապացուցողական հիմք իրականացնելու պորտալարի ուշ սեղմում վերակենդանացման կարիք ունեցող նորածինների մոտ: Հաշվի առնելով, որ առկա է սահմանափակ տեղեկատվություն կապված ծայրահեղ անհաս նորածինների արյան քանակի արագ փոփոխությունների հետ, առաջարկվում է չիրականացնել պորտալարի ռուտին կթում 29 շաբաթ և ցածր գեստացիոն տարիքով նորածինների մոտ, բացառությամբ նորածինների, որոնք ընդգրկված են որոշակի հետազոտությունների մեջ (դաս IIբ, LOE C-LD).**

4. Նորածնային վերակենդանացման առաջնակի քայլեր

Նորածնի վերակենդանացման առաջնակի քայլերը ներառում են մարմնի նորմալ ջերմաստիճանի պահպանում և նորածնի դիրքի ապահովում մեջքի վրա, անհրաժեշտության դեպքում արտազատուկների մաքրում արտածման կաթեթրով կամ տանձիկով, նորածնի չորացում (անհաս նորածնի դեպքում ծածկում պոլիէթիլենե ծածկոցով) և նորածնի շնչառության խթանում: Ստորև յուրաքանչյուր քայլը կքննարկվի առանձին:

4.1. Ծնարանում նորմալ ջերմաստիճանի պահպանման կարևորությունը

Առանց ասֆիքսիայի ծնված նորածինների համար ծննդաբերությունից հետո մարմնի ջերմաստիճանը հանդիսանում է մահացության կանխատեսման ուժեղ գործոն նորածինների բոլոր գեստացիոն խմբերում: Հիպոթերմիան բերում է նշանակալի հիվանդացության՝ ներփորոքային արյունազեղումների, շնչառական խանգարումների, հիպոգլիկեմիայի և ուշ սկզբով սեպսիսի զարգացման ռիսկի ավելացման [14, 18, 20, 49, 54-59]:

Այսպիսով՝

- **Ծննդաբերությունից հետո նորածնի մարմնի ջերմաստիճանը պետք է գրանցվի, քանի որ վերջինս հանդիսանում է ելքերի կանխատեսման և իրականացված միջամտությունների որակի ինդիկատոր (դաս I, LOE B-NR)**
- **Խորհուրդ է տրվում առանց ասֆիքսիայի ծնված նորածնի մարմնի ջերմաստիճանը պահպանել 36.5°C և 37.5°C միջև ծննդաբերությունից հետո ողջ կայունացման ընթացքում (65) (դաս I, LOE C-LD)**
- **Ջերմային հաղորդիչի, պոլիէթիլենի թաղանթի և գլխարկի օգտագործումը անհաս նորածինների մոտ իջեցնում է, սակայն չի բացառում հիպոթերմիայի զարգացման հնարավորությունը ծնարանում: Հիպոթերմիայի կանխարգելումը ներառում է նաև այլ մեթոդների՝ տաքացվող ներքնակների, վերակենդանացման ընթացքում տաքացված և խոնավացված գազերի օգտագործում և սենյակում բարձր ջերմաստիճանի ապահովում: Վերոնշյալ մեթոդների տարբեր համադրությունների օգտագործումը հիմնավորված է կանխարգելելու համար հիպոթերմիայի զարգացումը 32 շաբաթ և ցածր գեստացիոն տարիքով նորածնի մոտ (դաս IIբ, LOE B-R, B-NR, C-LD)**

- Վերակենդանացման բոլոր միջոցառումները, ներառյալ ներշնչափողային ինտուբացիան, սրտի անուղղակի մերսումը և ներերակային կաթեթերիզացիան պետք է իրականացնել ջերմակարգավորման միջոցառումների հետ զուգահեռ նույն վայրում (դաս IIբ, LOE C)
- Հիպերթերմիայից (38.0°C և բարձր) պետք է խուսափել հաշվի առնելով հնարավոր ռիսկերը [66-70,71,72,54,56,58,73] (դաս III: Harm, LOE C-EO)
- Նորածինները, որոնք հիպոթերմիկ են վերակենդանացումից հետո մշտապես խորհուրդ է տրվել տաքացնել դանդաղ՝ զերծ մնալու համար ապնոեի և առիթմիանների զարգացումից: Սակայն ներկայումս անբավարար է ապացուցողական հիմքը համեմատելու արագ տաքացումը ($0.5^{\circ}\text{C}/\text{ժամ}$ կամ արագ) դանդաղ տաքացման հետ ($0.5^{\circ}\text{C}/\text{ժամ}$ կամ դանդաղ) նշանակալի սառած նորածինների մոտ (ջերմաստիճանը 36°C պակաս): Հետևաբար 2 մոտեցումներն էլ հնարավոր է կիրառել (դաս IIբ, LOE C-LD)
- Սահմանափակ ռեսուրսների դեպքում հիպոթերմիայի կանխարգելման նպատակով հնարավոր է կիրառել պոլիէթիլենե ծածկոցներ, որոնք կծածկեն նորածնի մարմինը մինչև պարանոց կյանքի առաջին 1-2 ժամերի ընթացքում (դաս IIբ, LOE C-LD)
- Այլ տարբերակ կարող է հանդիսանալ մաշկ մաշկին շփումը կամ կենդուրու մայրական խնամքի իրականացումը (դաս IIբ, LOE C-LD)

4.2. Շնչուղիների մաքրում պարզ ամնիոտիկ հեղուկի առկայության դեպքում

Ծննդաբերությունից անմիջապես հետո արտածծումը կաթեթերի կամ տանձիկի միջոցով ցուցված է, եթե շնչուղիները խցանված են կամ անհրաժեշտ է սկսել դրական ճնշմամբ օդափոխություն:

- Խորհուրդ է տրվում արտածծում իրականացնել ծննդաբերությունից անմիջապես հետո, եթե առկա է առատ արտադրություն, որը կարող է խցանել շնչուղիները կամ եթե անհրաժեշտ է իրականացնել դրական ճնշմամբ օդափոխություն (դաս IIբ, LOE C)

Չհիմնավորված արտածծումից զերծ մնալը օգնում է կանխարգելել դանդաղասրտությունը, որը կարող է առաջանալ արտածծման հետևանքով: Նորածնային ինտենսիվ թերապիայի բաժանմունքում բուժվող ինտուբացված նորածինների շնչափողային արտածծման ժամանակ դիտվող թոքային ձգունակության, օքսիգենացիայի և ուղեղային արյան հոսքի

խանգարման փաստը, ստիպում է զգուշությամբ իրականացնել արտաձծում ծննդաբերությունից անմիջապես հետո [103-105]:

4.3. **Շնչուղիների մաքրում մեկոնիալ ամնիոտիկ հեղուկի առկայության դեպքում**

1970թ. սկսած մեկոնիալ պտղաջրերի առկայության դեպքում իրականացվել է պտղի քթըմպանի արտաձծում շեքի մակարդակին, որին հաջորդել է շնչափողի ռուտին ինտուբացիան և շնչափողից արտաձծումը: Այս գործելակարգը դադարեցվել է մոտ 10 տարի առաջ, երբ ռանդոմիզացված վերահսկվող բազմակենտրոն հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ մեկոնիալ պտղաջրերով ծննդաբերությունից ծնված նորածինները, որոնք ակտիվ են ծննդաբերությունից անմիջապես հետո չեն շահում վերոնշյալ միջամտությունից և կարող են զերծ մնալ ինտուբացիայից [106]: Քանի որ մեկոնիալ պտղաջրերը կարող են հանդիսանալ պտղի դիսթրեսի ցուցանիշ և ավելացնել նորածնի վերակենդանացման անհրաժեշտության հավանականությունը, ապա այս դեպքում անհրաժեշտ է, որ նեոնատալ թիմում առկա լինի շնչափողի ինտուբացիայի իրականացման հմտություններ ունեցող մասնագետ: Եթե նորածինը ակտիվ է, բավարար շնչառությամբ և մկանային տոնուսով, ապա վերջինս կարող է մնալ մոր հետ համատեղ՝ ստանալով նորածնային առաջնային խնամք: Մեկոնիումի նուրբ մաքրում կարող է իրականացվել տանձիկի միջոցով բերանից և քթից:

Այսպիսով՝

- **Եթե նորածնի ծնվելիս առկա են եղել մեկոնիալ պտղաջրեր, ցածր մկանային տոնուս կամ անարդյունավետ շնչառություն, ապա վերակենդանացման առաջնակի քայլերը պետք է իրականացվեն ջերմային հաղորդչի պայմաններում: Դրական ճնշմամբ օդափոխություն պետք է սկսել, եթե նորածինը չի շնչում կամ ունի դանդաղասրտություն 100 զարկ/րոպե և պակաս՝ չնայած իրականացված վերակենդանացման առաջնակի քայլերին: Շնչափողի ռուտին ինտուբացիայի իրականացումը խորհուրդ չի տրվում, քանի որ առկա է անբավարար ապացուցողական հիմք (*Դաս IIբ, LOE C-LD*)**

Այս պնդումը իր հիմքում ունի վնասման կանխարգելում (դրական ճնշմամբ օդափոխության սկզբի ուշացում, բուն միջամտությունից առկա հնարավոր վտանգ) ի համեմատ շնչափողի ինտուբացիայի և արտաձծման իրականացման արդյունքում ստացվող հնարավոր օգտի: Այսպիսով շեշտը պետք է դնել կյանքի 1 ռոպեի ընթացքում օդափոխության սկսման վրա այն նորածինների մոտ, որոնք չեն շնչում կամ շնչում են անարդյունավետ: Վերջնական

պատասխաններ ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ռանդոմիզացված հետազոտություններ, սակայն առկա տպագրված ապացույցները խորհուրդ չեն տալիս մեկոնիալ պտղաջրերի առկայության դեպքում ոչ ակտիվ նորածինների մոտ իրականացնել ռուտին ինտուբացիա և արտածծում: Վերջինս կարելի է իրականացնել, եթե շնչուղիները խցանված են, որը կասեցնում է դրական ճնշմամբ օդափոխության սկիզբը:

4.4. Սրտի զարկերի հաճախականության գնահատում

Ծննդաբերությունից անմիջապես հետո նորածնի սրտի զարկերի հաճախականության գնահատումը հանդիսանում է շնչառության կայացման արդյունավետությունը և միջամտության անհրաժեշտությունը գնահատող կարևորագույն ցուցանիշ: Վերակենդանացման ընթացքում նորածնի սրտի զարկերի հաճախացումը հանդիսանում է արդյունավետ պատասխանի առավելագույն զգայուն ցուցանիշը: Հետևաբար սրտի զարկերի հաճախականության գնահատման արագ, վստահելի և ճշգրիտ մեթոդի առկայությունը շատ կարևոր է: Նախորդ տարիներին պրեկորդիումի աուսկուլտացիան հանդիսանում էր ցուցված բժշկական հետազոտության տեսակ, իսկ պուլսօքսիմետրիան խորհուրդ էր տրվում կիրառել որպես սրտի զարկերի գնահատման ոչ ինվազիվ, արագ և շարունակական հետազոտության տեսակ [2]:

2015թ. ILCOR ուսումնասիրել է համակարգային վերլուծություն, որը ներառել է 1 հետազոտություն, որտեղ կլինիկորեն գնահատվել է ԷՍԳ և 5 հետազոտություններ, որտեղ համեմատվել են պուլսօքսիմետրիան և ԷՍԳ [118-122]: Առողջ նորածինների մոտ հաճախակի հնարավոր չի եղել շոշափել պորտալարի պուլսացիան և ցածր է գնահատվել սրտի զարկերի հաճախականությունը: 4 հետազոտությունների արդյունքներում ցույց է տրվել, որ 3 արտածման ԷՍԳ հանդիսանում է սրտի զարկեր հաճախականությունը գնահատող առավել արագ և վստահելի մեթոդ ի համեմատ պուլսօքսիմետրիայի մեթոդի [118,120-122]: 2 հետազոտության արդյունքներում ցույց է տրվել, որ ԷՍԳ մեթոդը առավել հաճախ է հայտնաբերել նորածնի սրտի զարկերը կյանքի 1 րոպեի ընթացքում [120, 121]: Չնայած հիմնական տարբերությունը սրտի զարկերի գնահատման 2 մեթոդների միջև փոքր է, սակայն պուլսօքսիմետրիայի մեթոդի օգտագործման դեպքում դիտվել է նորածնի սրտի զարկերի հաճախականության ցածր գնահատում, որը կարող է կապված լինել ավելորդ միջամտությունների իրականացման բարձր ռիսկի հետ: Կյանքի առաջին 2 րոպեների ընթացքում պուլսօքսիմետրիայի տվյալները հիմնականում ցուցադրում են նորածնի սրտի

զարկերը 60-100 զարկ/րոպեում սահմաններում, երբ միաժամանակյա ԷՍԳ մեթոդը ցույց է տալիս սրտի զարկեր ավելի քան 100 զարկ/ր [118,119,122]:

Այսպիսով՝

- **Վերակենդանացման ընթացքում 3 արտածման ԷՍԳ մեթոդի օգտագործումը հնարավորություն է տալիս իրականացնել նորածնի սրտի զարկերի արագ և ճշգրիտ գնահատում ինչպես անհաս, այնպես էլ հասուն նորածինների մոտ (դաս IIբ, LOE C-LD)**

ԷՍԳ մեթոդի օգտագործումը չի փոխարինում պուլսօքսիմետրի օգտագործումը նորածնի սատուրացիայի ցուցանիշների գնահատման համար:

4.5. Թթվածնի կարիքի գնահատում և օքսիգենոթերապիա

Ծննդաբերությունից հետո կյանքի առաջին 10 րոպեների ընթացքում նորածնի արյան մեջ թթվածնի մակարդակը սովորաբար չի հասնում արտարգանդային կյանքին բնորոշ թթվածնի մակարդակի: Օքսիհեմոգլոբինի մակարդակը նորմայում մնում է 70-80% սահմանում կյանքի առաջին մի քանի րոպեների ընթացքում, որը տեսանելի ուղեկցվում է ցիանոզով: Որոշ հետազոտություններ փաստում են, որ մաշկի գույնի կլինիկական գնահատումը հանդիսանում է արյան օքսիհեմոգլոբինի մակարդակի գնահատման վատ ցուցանիշ ծննդաբերությունից անմիջապես հետո:

Օպտիմալ թթվածնաբուժության ընտրությունը վերակենդանացման ժամանակ ունի առանցքային կարևոր նշանակություն, քանի որ ինչպես արյան անբավարար օքսիգենացիան, այնպես էլ թթվածնային գերհագեցվածությունը կարող է վնասել նորածնին: Հիպօքսիան և իշեմիան կարող են բերել տարբեր օրգանների վնասման: Ներկայումս կուտակված հետազոտական փորձը փաստում է, որ վերակենդանացման ժամանակ զարգացած անգամ կարճ գերօքսիգենացիան կարող է ունենալ բացասական ազդեցություն:

4.5.1. Պուլսօքսիմետրիայի օգտագործում

- **Խորհուրդ է տրվում օգտագործել պուլսօքսիմետրիա վերակենդանացման, դրական ճնշմամբ օդափոխության իրականացման, կյանքի առաջին 5-10 րոպեներից հետո կենտրոնական ցիանոզի պահպանման ընթացքում կամ երբ իրականացվում է թթվածնային թերապիա [2]:**

Հրապարակված տվյալների համադրելի համեմատման համար ընդունված է ստուգել պրեդուկտալ սատուրացիայի ցուցանիշները (աջ նախաբազկի շրջանում) (123):

4.5.2. Թթվածնի օգտագործումը հասուն նորածինների մոտ

Երկու մետաանալիզների արդյունքում, որտեղ համեմատվել է վերակենդանացումը սենյակային օդով ի համեմատ 100% թթվածնի, ցույց է տրվել ապրելիության ավելացում սենյակային օդով վերակենդանացման արդյունքում [124, 125]: Ներկայումս արկա չեն հետազոտություններ, որտեղ համեմատվում են թթվածնի տարբեր մակարդակներով իրականացված վերակենդանացման արդյունքները:

Այսպիսով՝

- **Հիմնավորված է վերակենդանացման սկսումը սենյակային օդով:**
- **Եթե խառնիչ առկա չէ, ապա վերակենդանացումը պետք է սկսել օդով (դաս IIբ, LOE B)**
- **Քանի որ բացակայում են հետազոտությունները, որտեղ համեմատվում են նորածնային վերակենդանացման արդյունքները, որոնք իրականացվել են այլ թթվածնի կոնցենտրացիայով կամ օքսիհեմոգլոբինի այլ թիրախային մակարդակներով, ապա խորհուրդ է տրվում օգտագործել հասուն առողջ նորածնին բնորոշ պրեդուկտալ սատուրացիայի ցուցանիշները (տես աղյուսակը), անկախ նորածնի հասուն կամ անհաս լինելուց (դաս IIբ, LOE B)**
- **Վերակենդանացումը օդով կամ թթվածնա-օդային խառնուրդով սկսելով և այնուհետև տիտրելով թթվածնի կոնցենտրացիան կարելի է հասնել սատուրացիայի ցանկալի մակարդակներին՝ օգտագործելով պուլսօքսիմետր (դաս IIբ, LOE C)**

4.5.3. Թթվածնի օգտագործումը անհաս նորածնի մոտ

7 ռանդոմիզացված հետազոտությունների մետաանալիզը, որտեղ համեմատվել են անհաս նորածնիների վերակենդանացման իրականացումը թթվածնի բարձր (65% և բարձր) և ցածր (21-30%) կոնցենտրացիաներով ցույց է տվել, որ թթվածնի բարձր կոնցենտրացիայի օգտագործումը չի ուղեկցվում ապրելիության լավացմամբ [126-132]: Նմանապես, առկա չէ բրոնխոթոքային դիսպլազիայի [127, 129-132], ներփորոքային արյունազեղումների [127, 130, 131] կամ անհասության ռետինոպաթիայի [127, 130, 131] զարգացման կանխարգելում:

Այսպիսով՝

- Անհաս նորածինների վերակենդանացումը (35 շաբաթ և ցածր) պետք է սկսել թթվածնի ցածր կոնցենտրացիայով (21-30%) և թթվածնի կոնցենտրացիան պետք է տիտրել հասնելու համար հասուն առողջ նորածինն բնորոշ պրեդուկտալ սատուրացիայի միջքվարտիլային ցուցանիշներին [133] (Դաս I, LOE B-R)
- Անհաս նորածինների վերակենդանացման միջոցառումների սկսումը թթվածնի բարձր (65% և ավելի) կոնցենտրացիաներով խորհուրդ չի տրվում (Դաս III—Օգուտի բացակայություն, LOE B-R)

Այս խորհուրդը արտացոլում է այն դիրքորոշումը, որ անհաս նորածնի պարագայում հավելյալ թթվածնի օգտագործումը կարող է վնասել վերջինիս առանց ապացուցված արդյունավետության:

5. Դրական ճնշմամբ օդափոխություն

5.1. Առաջին շնչառական ակտեր

Կենդանիների մոտ իրականացված տարբեր հետազոտություններ փաստում են, որ հեղուկով լցված թոքերից օդով լցված թոքերի անցման ընթացքում երկարաձգված ներշնչման օգտագործումը կարող է ունենալ դրական ազդեցություն ծննդաբերությունից անմիջապես հետո ֆունկցիոնալ մնացորդային ծավալի ձևավորման վրա [134, 135]: Որոշ կլինիցիստներ առաջարկել են կիրառել այս մեթոդը նորածինների մոտ: Գրականության վերլուծությունը վեր է հանել 3 ռանդոմիզացված վերահսկվող [136-138] և 2 կոհորտային [139, 140] հետազոտություններ, որտեղ ցույց է տրվել, որ երկարաձգված ներշնչման կիրառման հետևանքով դիտվում է արհեստական ապարատային շնչառության օգտագործման հաճախականության նվազում (ապացուցողականության ցածր մակարդակ): Վերոնշյալ հետազոտություններում ցույց չի տրվել մահացության, բրոնխաթոքային դիսպլազիայի կամ օդի արտահոսքի ցուցանիշների բարելավում:

Այսպիսով՝

- Ներկայումս երկարաձգված ներշնչման կիրառության ժամանակ բացակայում են մեթոդի օգտագործման արդյունքում կարճաժամկետ և երկարաժամկետ անվտանգության տվյալները, ինչպես նաև առկա չեն նորածնի մոտ 5 վայրկյանից երկարատև կիրառելի ճնշման մեծության մասին տվյալներ (Դաս IIբ, LOE B-R)

Անհրաժեշտ է իրականացնել հետազոտություններ, որտեղ կկիրառվեն հստակ պրոտոկոլներ:

2010թ. ուղեցույցում ներառված խորհուրդները հետևյալն են:

Ծննդաբերությունից հետո տեղի ունեցող առաջնակի սպոնտան կամ պարտադրված ներշնչումները ստեղծում են ֆունկցիոնալ մնացորդային ծավալ [141-144]: Վերակենդանացման ժամանակ դրական ճնշմամբ օդափոխության օգտագործման դեպքում օպտիմալ ճնշման, ներշնչման ժամանակի և հոսքի արագության ցուցանիշները, որոնք անհրաժեշտ են արդյունավետ ֆունկցիոնալ մնացորդային ծավալի հաստատման համար հաստատված չեն: Կենդանիների վրա իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ ծննդաբերությունից անմիջապես հետո մեծ ծավալների օգտագործումը կարող է հեշտորեն վնասել անհաս թոքերը [145, 146]: Հիմնականում օգտագործելի է 40-60 շնչառական ակտ 1 րոպեում հաճախականությունը, և այլ հաճախականության արդյունավետությունը ուսումնասիրված չէ:

Առաջնակի օդափոխության արդյունավետությունը գնահատվում է սրտի զարկերի հաճախականությամբ [147]: Պետք է սկսել սրտի անուղղակի մերսում, եթե դանդաղասրտությունը պահպանվում է: Առաջնակի ներշնչման ճնշման մեծությունը փոփոխական է և անկանխատեսելի, հետևաբար այն պետք է անհատականացվի ստանալու համար սրտի զարկերի հաճախականության ավելացում կամ յուրաքանչյուր շունչը ուղեկցող կրծքավանդակի տեսանելի շարժունակություն:

Այսպիսով՝

- **Ներշնչման ճնշումը պետք է մշտադիտարկվի: Որպես նախնական ճնշում կիրառելի և արդյունավետ է 20 սմ H₂O, սակայն 30-40 սմ H₂O ճնշման կիրառության կարիք կարող է լինել որոշ հասուն առանց սպոնտան շնչառության նորածինների մոտ [142, 144, 148] (Դաս IIբ, LOE C)**
- **Դրական ճնշմամբ օդափոխություն պետք է կիրառել 40-60 շնչառական ակտ 1 րոպեում հաճախականությամբ՝ հասնելու համար սրտի զարկերի ավելի քան 100 զարկ 1 րոպեում հաճախականության (Դաս IIբ, LOE C)**
- **Դիմակով արհեստական շնչառության ժամանակ CO₂ հայտնաբերիչների օգտագործման առավելությունները հիմնավորված չեն (Դաս IIբ, LOE C)**

5.2. Դրական ճնշում արտաշնչման վերջում (PEEP)

Ապնոիկ անհաս և հասուն նորածինների մոտ ցուցված է դրական ճնշմամբ օդափոխության կիրառությունը: Ինքնափչվող, հոսքով փչվող վերակենդանացման պարկերի կամ T-աձև վերակենդանացման սարքի օգտագործումը ցուցված է դրական ճնշմամբ օդափոխություն իրականացնելու դեպքում: 2010թ ներկայացված ուղեցույցում նշվում է շարունակական դրական ճնշման արդյունավետության մասին դրական ճնշմամբ օդափոխության իրականացման պարագայում: Սույն պնդումը հիմնավորված չէր որևէ հետազոտությամբ: 2015թ վերանայման ժամանակ արդեն իսկ առկա 2 ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունների արդյունքում [151, 152] ցույց է տրվել, որ անհաս նորածինների մոտ դրական ճնշմամբ օդափոխության օգտագործման դեպքում հավելյալ PEEP օգտագործումը չի ուղեկցվում մահացության ցուցանիշի իջեցմամբ, սրտային դեղորայքի օգտագործման նվազմամբ, սրտի զարկերի հաճախականության ավելացման արագացմամբ, ինտուբացիայի կարիքի նվազմամբ, օդի արտահոսքի համախտանիշի կամ բրոնխաթոքային դիսպլազիայի զարգացման ցուցանիշների բարելավմամբ:

Այսպիսով՝

- **Անհաս նորածինների մոտ դրական ճնշմամբ օդափոխության իրականացման դեպքում ցուցված է մոտավորապես 5 սմ H₂O PEEP կիրառությունը (Դաս IIբ, LOE B-R)**

Ինքնափչվող պարկի կիրառության դեպքում անհրաժեշտ է ճնշման կարգավորման փականի առկայություն:

5.3. Արհեստական շնչառության սարքեր և կառավարելի շնչուղիներ


- **Արհեստական շնչառություն արդյունավետ կերպով հնարավոր է իրականացնել հոսքով կամ ինքնուրույն փչվող վերակենդանացման պարկով կամ T-աձև վերակենդանացման սարքով (Դաս IIա, LOE B-R)**

5.3.1. Ինքնափչվող վերակենդանացման պարկ 240-700 մլ ծավալով

- Փքվում է ինքնուրույն, առանց սեղմված գազի աղբյուրի
- Ինքնափչվող վերակենդանացման պարկի միջոցով տրվող թթվածնի կոնցենտրացիան չի կարող լինել հաստատուն, քանի դեռ գազի մուտքի հատվածում նրան միացված չէ պահեստարան (ռեզերվուար)
- Ներշնչման առավելագույն ճնշումը կախված է պարկը սեղմելու ուժից: Ճնշման ճշգրտության մեջ համոզված լինելու համար օգտագործում են սարքի մեջ ներդրված

ճնշումը սահմանափակող փական, կամ հատուկ եղանակով ինքնափչվող վերակենդանացման պարկին միացված մանոմետր


- Ինքնափչվող վերակենդանացման պարկի միջոցով CPAP անհնարին է առաջացնել



Նկար 1: Ինքնափչվող վերակենդանացման պարկ

5.3.2. T-աձև վերակենդանացման սարք

- Վերահսկվում է հոսքով և ունի նախատեսված ճնշման սահմանափակում
- Պահանջում է սեղմված օդի աղբյուր
- T-աձև վերակենդանացման սարքն ունի հոսքաչափ (սահմանել 10 լ/ր)
- Անհրաժեշտության դեպքում PIP-ն, PEEP-ը կարելի է կարգավորել համապատասխան պտուտակների միջոցով: Ներշնչման ճնշումը պետք է հսկվի
- Ներշնչում ապահովելու համար անհրաժեշտ է մատով պարբերաբար փակել և բացել սարքի հատուկ բացվածքը, որը միացված է դիմակին կամ ներշնչափողային խողովակին:
- T-աձև վերակենդանացման սարքով ներշնչում առաջացնելու համար անհրաժեշտ է դիմակի հերմետիկ ամրակցում:
- Հնարավոր է մինչև 100% թթվածին ապահովել
- Սարքը գործածելուց առաջ պահանջվում է որոշակի ժամանակ, ըստ երեխայի կարիքների անհրաժեշտ պարամետրեր սահմանելու համար



Նկար 2: T-աձև վերակենդանացման սարք

5.3.3. Դիմակով կատարվող ԱՇ

- Ինքնուրույն շնչառություն չունեցող հասուն նորածիններին առաջին 5 ներշնչման ակտերը կատարելու համար պահանջվում է 30-40 սմ ջ. ս. ճնշում (Class IIb, LOE C), ոչ կանոնավոր շնչառություն ունեցող նորածինների մոտ ներշնչման ճնշումը կարող է լինել 20 -25 սմ ջ. ս.:
- Շնչառության հաճախությունը պետք է լինի 40-60 ակտ/ր, սրտի անուղղակի մերսման դեպքում՝ 30 ակտ/ր (նկար 5):
- Դիմակով ԱՇ-ը 2 թուպեից ավելի երկարաձգվելու դեպքում կատարել ստամոքսի զոնդավորում:
- Տարբեր քաշերի երեխաների համար նախատեսված են տարբեր չափսերի դիմակներ, որոնց առկայությունը ծննդաբերության ժամանակ պարտադիր է: Դիմակը պետք է հասնի կզակին, ծածկի բերանը և քիթը, սակայն ոչ աչքերը: Ամրակցման այս դիրքով ապահովվում է հերմետիկությունը և ԱՇ-ի արդյունավետությունը:



Նկար 3: Դիմակի ամրացման ճիշտ դիրք




Նկար 4: Դիմակի ամրացման սխալ դիրքեր

- Վերակենդանացման սարքերը զգայուն չեն թոքային ձգունակության փոփոխություններին՝ անկախ կիրառվող սարքից [160] (Դաս IIբ, LOE C)
- Շնչառական մեխանիկայի մոնիտորների կիրառությունը կարող է կանխարգելել հավելյալ ճնշման օգտագործումը, ինչպես նաև գնահատել թոքերի րոպեական օդափոխության ծավալները, որով և դրական ճնշմամբ օդափոխության ընթացքում հնարավոր է գնահատել գազափոխանակությանը Չնայած վերոնշյալին այս սարքերի կիրառության ժամանակ վերջիններիս ազդեցությունը կարևոր էլքերի վրա հետազոտված և ապացուցված չէ (Դաս IIբ, LOE C-LD)

5.3.4. Լարինգեալ դիմակ

- Լարինգեալ դիմակը, որը փակում է կոկորդամուտքը, կարող է ապահովել արդյունավետ օդափոխություն 34 շաբաթ և բարձր գեստացիոն տարիքով նորածինների մոտ: Լարինգեալ դիմակի օգտագործման ուսումնասիրությունները առկա չեն 34 շաբաթից ցածր գեստացիոն տարիքով կամ 2000գ. և ցածր մարմնի զանգվածով նորածինների մոտ: Լարինգեալ դիմակը հանդիսանում է շնչափողի ինտուբացիայի այլընտրանք, եթե դիմակով և պարկով վերակենդանացումը արդյունավետ չէ [163] (Դաս IIբ, LOE B-R)
- Լարինգեալ դիմակի օգտագործումը ցուցված է 34 շաբաթ և բարձր գեստացիոն տարիքով նորածինների մոտ, եթե շնչափողային ինտուբացիան անարդյունավետ է կամ անհնար է իրականացնել (Դաս I, LOE C-EO)

Մանժետ



Նկար 5: Լարինգեալ դիմակ

Լարինգեալ դիմակի կիրառությունը գնահատված չէ սրտի անուղղակի մերսման ժամանակ կամ երբ անհրաժեշտ է կիրառել վերակենդանացման համար անհրաժեշտ դեղորայք:

6. Ներշնչափողային ինտուբացիա

Նորածնային վերակենդանացման ժամանակ ներշնչափողային ինտուբացիայի ցուցում կարող է առաջանալ, եթե դիմակով և պարկով վերակենդանացումը անարդյունավետ է կամ երկարաձգված, իրականացվում է սրտի անուղղակի մերսում կամ յուրահատուկ ցուցումների դեպքում, օրինակ՝ ստոծանիական ճողվածքի առկայություն: Եթե դրական ճնշմամբ օդափոխությունը իրականացվում է ներշնչափողային խողովակով, ապա արդյունավետության լավագույն ցուցանիշ է հանդիսանում սրտի զարկերի հաճախականության ավելացումը: Չնայած այս ամենին արտաշնչած CO₂ որոշումը հանդիսանում է ներշնչափողային խողովակի ճիշտ տեղադրման լավագույն ցուցանիշ [6,7]: Այսպիսով՝

- **Արտաշնչած CO₂ որոշումը հանդիսանում է ներշնչափողային խողովակի ճիշտ դիրքի լավագույն ցուցանիշ՝ ներառյալ շատ ցածր մարմնի զանգվածով նորածինների մոտ [164-167] (Ղառ IIա, LOE B)**
- **Նորածինների մոտ կրծքավանդակի շարժումների, շնչառական աղմուկների համաչափ տարածման ցուցանիշները հանդիսանում են ներշնչափողային խողովակի ճիշտ դեղադրման հավելյալ ցուցանիշներ**

Աղյուսակ 1:



Ներշնչափողային խողովակի չափսերն ու խորությունն ըստ երեխայի մարմնի զանգվածի և գեստացիոն տարիքի

Մարմնի զանգված (գրամ)	Գեստացիոն տարիք (շաբաթ)	Խողովակի չափսը (մմ) (ներքին տրամաչափ)
<1000	<28	2,5
1000-2000	28-34	3,0
2000-3000	34-38	3,5
>3000	>38	3,5-4,0


Խորություն	
Քաշ (կգ)	Խորություն (սմ)
1	7
2	8
3	9
4	10

Ինտուբացիայի իրականացումն ընթանում է մի քանի հաջորդական քայլերով.

1. Առաջին քայլ՝ պատրաստվել մտցնել լարինգոսկոպը



2. Երկրորդ քայլ՝ լեզվակը մտցնելու ուղենիշներ




Լեզու


Վալեկուլա

Մակկոկորդ

3. Երրորդ քայլ՝ լեզվակի բարձրացումը կոկորդամուտքը տեսնելու համար



4. Չորրորդ և հինգերորդ քայլեր՝ ձայնաճեղքի վիզուալիզացիա և խողովակի մուտքը ձայնաճեղքով



7. Շնչուղիներում շարունակական դրական ճնշման կիրառություն (CPAP)

3 ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունների արդյունքում, որտեղ ներառվել են 2358 անհաս նորածին, որոնք ծնվել են 30 շաբաթ և ցածր գեստացիոն տարիքով, ցույց է տրվել CPAP մեթոդի կիրառման արդյունավետությունը ուսումնասիրված նորածինների խմբի մոտ ի համեմատ դրական ճնշմամբ օդափոխության և ներշնչափողային ինտուբացիայի կիրառման: CPAP իրականացումը ծնարանում իջեցնում է ինտուբացիայի հաճախականությունը, մեխանիկական օդափոխության տևողությունը, մահացության կամ բրոնխաթոքային դիսպլազիայի զարգացման հաճախականությունը՝ առանց ավելացնելու օդի արտահոսքի համախտանիշի կամ ներփորոքային արյունազեղումների զարգացման հաճախականությունը [169-171]:

Այսպիսով՝

- **Սպոնտան շնչառությամբ և շնչառական խանգարումներով անհաս նորածինների շնչառությունը հնարավոր է օժանդակել CPAP մեթոդով՝ դրական ճնշմամբ օդափոխության իրականացման համար ռուտին չօգտագործելով ինտուբացիա (Դաս IIբ, LOE B-R)**

8. Սրտի անուղղակի մերսում

